44. ՉԻՆԻ-ՄԱՉԻՆԻ ՀԵՔԻԱԹ

Ժամանակին մարթու մեկը կ'էրթա ղուրբաթ Չինի-Մաչինի քաղաքը։ Կէրթա օսկերիչիմ նոքարութեն կենե գը։ Էղավ օր մարթում մեկ էկավ աղայեն էրկու մատանի ուզեց։

Հարցրեց, թե՝ ո՞ր ապրանքեն։

Ըսավ.— Մեկը՝ էրկու հարուր օսկի էլլի, մեկը՝ հարուր օսկի էլլի։

Օսկերիչ չաքմաչեն բացեց, մատանիները տվեց, օսկեստանք առավ։

Էդ օսկերիչի ծառայի միտք փոխվավ։ Էն քաղաք էման քաղաք էր, օր ոչ գող կար, ոչ գիշութեն կար, մենակ մեկ քարգա կը քաշեին թյուքնի վրեն, կէրթային կը պառկեին, վաղը գուքային ֆարդեն կը քաշեին, գուքային թյուքան կը նստեին գը սովորություն էն էր։

Օր օր էդ մարթ էդ մատնիքներ տարավ, նոքարի միտքը փոխվավ, դողության մասով, ինքն իրեն մտքով ասաց. «Ինչի՞ ես էդքան նոքարութեն էնիմ, մի քանի մատնիք կառնեմ, կէրթամ իմ երկիր կը կառավարվիմ դուշ։

Գիշեր նոքար բացեց չաքմաչեն, մատնիքներ առավ ու պայեց։

Օսկերիչը հ'առավոտուն էկավ իրեն խանութը, չաքմաչեն բացեց օր, չաքմաչեն կողոպտել են, իրեք մատանի չկա։ Շուտ կառավարության ներկայացավ՝ օր իմ խանութ կողոպտել են։

Կառավարությունը հրաման էրավ։ Էն քաղաք, էնպես քաղաք

էր օր քննություն չկար, դատողություն չկար, գողություն չկար, ռամչի ուներ, օր գողութեն էղներ, ռամչիք գուքային ու գողը դուրս կը հանեին։

Կառավարություն հրամայեց ռամչոց, որ էս մարթու թյուքանը կողոպտեր են, պետք է գողեր գտնեք։

Ռամչիք ըսին. «Հրաման էրե, էս քաղքի էք, որց, էրիկ մարթ, կնիկ մարթ գան, ներկա ըլլին հոս տեղ, կառավարության դուռը»։

Բոլոր, ընդհանուր ժողովուրթն՝ էք, որց, էկան կառավարության դուռը, ներկա էղան։ Կառավարություն ռամչոց հրաման էրավ. «Ռամ ցքեք, հայինք թե գող ո՞վ է»։ Ռամչիք ըսին.— Թող էքեր մեկ կողմ կայնին, որցեր՝ մեկ կողմ կայնին։

Ռամչիք ռամ ցքին, տեսան օր էքերու մեջ ռանըմ չկա։ Կառավարություն հրաման էրավ էքերը գնացին։ Որցերը էրկու կես էրին, ռամ ցքին, էն ծառան որ կողմ էր, ռամ էն կողմն ընգավ։ Ռամ ցքելով միշտ ռամը էն ծառայի կողմ գիյներ։ Ռամ ցքելով, ժողովուրթ բաժնելով մնաց մե ծառա, մե հոգի, էրկուսը բաժնեցին՝ մեկը մե կողմ, մեկը մեկ կողմ կայնեցուցին. ռամչիք ռամ ցքին, ռամը էն ծառայի վրա կայնեցուցին՝ թե էսիկ է գողը։

Կառավարություն հրաման էրավ օր էն ծառային տարեք մափրս։

Էն մարթն էլ ուրացավ, թե ես գողցած չեմ։ Կառավարություն հավատաց ուր ռամչոնց հավատարիմ ըլիլը, ծառային մափրս էրավ ու հրամեց օր.— Ամեն օր մեկ թրամ միս պրծուցեք էսոր մսքեն պատիժ, ու բժիշկը գուքա կը լավցնե գու պրծած տեղը, օր տանչվի։

Որ մատանիները պայել էր, որ տարին օր լրացավ, կառավարություն մեկ տարի էր կտրել ինոր տանչանքի վճիռը, կառավարություն հրաման էրավ, օր էդ մարթ էրթա իրեն երկիրը։ Որ ազատեց, կառավարություն կանչեց ուր ռամչոնց ասեց.— Դուք ռամ սխալ ցքիք, էսոր մարթուն զուր տանչեցիք, մեղքը ձեզմե պահանչվի պիտի։

Ռամչիք ըսին.— Մենք սխալ չենք, գուզենք իրեն ծոցը մատանիները բռնենք։

Կառավարություն ըսեց.— Սխալ է սխալ չէ՝ աստված ձեզնեն պիտի պահանչե էսոր մեղքը։

Որ ազատվավ, ծառան տաս օր Չին ու Մաչինի մեջը մնաց։ Նորեն ծառան ըսավ թե՝ էրթամ, մատանիները պայել եմ, էրթամ առնիմ, տանիմ երգիրս։

Ռամշիք միտք են դրել օր. «Որ օր կ'էրթա, էրթանք քաղաքի դուռը սպասենք, մատանիները ինոր ծոցին մեջը բռնենք»։

Ծառան օր մատանիները առավ քաղքեն հ'ելավ, դուռը էրկու կողմեր կը սպասեին դու խարաղուլու պես, որ ծառան քաղաքի դռնեն դուրս գելլեր, ռամշիք ըսին.— Ո՞ւր կէրթաս, եգե, քեզի կառավարության դուռը կուզենք։

Էրկու կողմեն յախեսթեն բռնեցին, թող չ'տվին, ինչքան լացեց, բողոքեց օր միք տանի կառավարության դուռը, անգանջ չէրին։ Տարան կառավարության դուռը։ Կառավարության լուր տվին ռամշիք։ Կառավարություն էկավ իրեն դահի վրա նստավ, ռամշիք ըսին.— Կառավարությունը սաղ ըլլի, դուք կ'ըսեիր, թե ռամ չկըրցիք ցքե, էն մարթու մեղքը աստվածեղեն կը պահանջե դու, հրաման էրա, մատանին ծոցեն թող ելլի։

Էրկու ղավթիա էկան, իրեն հանթերցները քակեցին, ծոցեն մատանին հանեցին։

Ռամշիք ըսին.— Կառավարություն սաղ ըլլի, մենք սխալ չէինք, ֆախաթ, մատանիներու տեղը գիտեինք կը բերեինք դու, ֆախաթ չ'բերինք օր չըսես ուրիշեն բերիք, էսոր չէր, մեր սաղության համար մինչև մեկ տարի համփերեցինք։

Ծառային կառավարությունը ըսավ.— Դու քու տանջանքդ քաշեցիր, մատանիները քուկդ են, մատանիներու գինը ես թյուքընջուն կը վճարեմ դու, գնա՛, էլ գիշություն չ'էնես։

Մատանիները ծառան բերեց, ծախեց, նստավ ուր տունը կերավ։

Երկնուց իրեք խնձոր իջավ, մեկը՝ ըսողին, մեկը՝ գրողին, մեկն էլ լսողին։